



Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առաւօրեայ օրերէն):

Յայտարարութիւնը ընդունւում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր ըստ ին 2 կոպեկ:

“ՄՇԱԿ”

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴԻՐ

Ներկայ 1887 թիւ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպագանդով: Մինչը կը ստանանք սեփական
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՊԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թամաշեի տանը):
Կայսերութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հա-
ցէով: ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսի հայերը և գերեզմանատան խնդիրը.—
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին. Ներ-
քին լուրերը.—ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Ծայրեր.

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅԵՐԸ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Ծայրերի է արդէն ընթերցողներին մեր
Թղթակից պ. Հայկակի նամակներէն, Պե-
շիվթաշի հայոց գերեզմանատան խնդիրը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԱՅՐԵՐ

Գ.

ԱՊՐՈՍՏԻ ՀԱՄԱՐ

III

Բակի փոքրիկ դուռը պինդ փակելով, Գասպա-
րը մտաւ իր տունը: Ներս մտնելուն պէս նրա կի-
նը, Նիխարէթը, իսկոյն ոտքի կանգնեց, առաւ
նրանից մեծ քաղնիները և քաթանի մէջ կարծ
հաշտեցողութեամբ դրաւ պահարանում: Գասպարը
քթի տակ մի բան ինքնին թաղելով դուրս գնաց:
Նիխարէթը գիտէր, որ նա ամեն երեկոյ «կիկե-
ցէ» է ասում: Նա էլ դուրս եկաւ, կանգնեց չեմ-
բուս:

Մանրակաւոր քիչ դէս ու դէն մանգալաց
յետոյ մտաւ փոքրիկ պարտէզը, ուր երկու թէ ե-
րեք փոքրիկ ծառեր կային: Չը նայած որ հա-
մարեա բոլորովին մուլն էր, նա ծառերին չորս
կողմից նայեց և հարցրեց կնոջը:

—Կասես այս կողմերին ձեռք է դիպել:
—Ով պէտք է դիպած լինի. այդպէս է եղել:
—Այ կնիկ, էլի սոստ ասեցիր, չեմ տեսնում:
Ամեն օր խո ծառը աչքիս առջն է:

—Սն ինչ է, շարունակեց նա բոպէական լու-
թիւնից յետոյ և վերցրեց մի տերև—Որ ասում
եմ... Մնաստա՞ւ դիպչող եղել է, էգուց առա-
ւօտը կիմանամ: Ել սուր ես կտրել այսօր:
Նա բարձրացրեց ձայնը:

—Տանն եմ եղել, պատասխանեց կնոջը հա-
ղարտ.—ոչ մի տեղ չեմ գնացել:

—Օ, կտրվի ձեր ցեղը... մի ժամ թէ սոստ
չասէր, կը տրաքվէր:

—Սոստ չեմ ասում, Աստուածատուրի արեւը
վկայ:

—Ձայնդ կտրվի, անպիտան: Սոստ չէ ասում,
տերեւ ես եմ վեր գցել:

—Մառից տերև չի ընկնի:

—Նիքէ քաթի լինի, կընկնի. իսկ այսօր քաթի

Թիֆլիսից կառավարութիւնը պահանջում է
որ Կ. Պոլսի հայերը յանձնեն իրան յիշեալ
գերեզմանատունը, իսկ Կ. Պոլսի հայոց աղ-
քային ժողովի անդամների մեծամասնու-
թիւնը, հայոց հողերականների հետ միա-
սին, ընդգրկւորւում են կառավարութեան
այդ պահանջին:

Այդ խնդրի վրա կարելի է նայել երկու
տեսակէտից: Նախ իրաւաբանական, օրինա-
կան տեսակէտից նայելով, պէտք է խոստո-
ւանքը որ ամեն պետութիւն իր մէջ գոյու-
թիւն ունեցող հաստատ օրէնքների հիման
վրա իրաւունք ունի օրէնքով որոշված գնով
յետ գնել մասնաւոր անձինքներից, կամ
մասնաւոր հաստատութիւններից այն հողե-

րանքներն չէ եղել: Երկր թէ պետութեան մէկը
պակաս կը լինի, պատասխան կը տա:

—Գուցէ փողոցից են բարով տուել:
—Դա էլ կը լինի, բայց դու որտեղ ելիր:

Մառի մօտից Գասպարը գնաց թնրատունը,
որ չինած էր բակի աջ ծայրում:

—Հաւերը թնու են ելել: Բանալին բեր տե-
նեմ:

Նա մօտեցաւ դրանը և տեսնելով, որ նա կող-
պած չէ, բարկացած իր մօտ կանչեց կնոջը, չը
մոտանալով մի քանի հայոյանք տալ: Նիխարէ-
թը իսկոյն վազեց, գնաց նրա մօտ:

—Սա ինչ բան է, սա ինչքն ես անում. խեղդ
զլինից թուել է, ինչու է, ինչու դուռը բաց է,
ասա տեսնեմ:

Եւ Գասպարը սպառնալով մի երկու քայլ ա-
րաւ դէպի կնոջը, որ տեղից չը շարժվեց և պա-
տասխանեց:

—Հէնց հիմա ուզում էի դառ փակել. չէի մո-
ռացել...

—Հնա, մոռացած չէիր... եթէ գային հասկը
տանէին, դու էլ կը պարծնայիր հնա, անդգամ:

Նիխարէթը լուռ գնաց, ճրագ բերաւ. մարդը
նրա մօտ, սկսեց մի մի շոշափել հաւերը:

—Քանիսն ունի ձու:

—Դեռ չեմ տեսել:

—Այ անիծուիս դու, անիծուիս: Շուտ արա
տես: Չորանայ քեզ բերողը: Ախր լաւ է ասել
Սողոմոն իմաստունը թէ չլաւ է յանապատի բնա-
կիլ քան ընդ կնոջ անդամը:

—Հաղար անգամ ասել եմ, որ այդ խօսքերն
էլ չասես, ասեց Նիխարէթը լացի ձայնով: Խեղճ
կնոջ թէն էլ հասկանում Սողոմոնի ասածը,
բայց երևակայում էր թէ որքան սարսափելի բան
պիտի լինի նա, նախ որովհետև Սողոմոնի բերա-
նիցն էր դուրս եկել և երկրորդ, որովհետև իր
մարդը շատ բարկացած ժամանակն էր կրկնում:

Կնոջ այդ ձայնի վրա Գասպարը կարծես խեղ-
ճահարկեց, նայեց նրա դէմքին մի կարեկցու-
թեամբ, մինչև իսկ նրա կարմիր, ջրալի շրթունք-
ները ծալտի պէս մի բան արտայայտեցին, որի
նշանն էր նրա հաստիկ թշնմի վրա երկու փո-
քիկ փոսեր գոյանալը: Շուտով նրանք կողպեցին
դուռը և նուսն գնացին:

ըր, որոնք անհրաժեշտ են իրան որ և է պե-
տական պիտոյքի համար: Այդպիսով պետու-
թիւնները ստիպողական կերպով յետ են
գնում մասնաւոր անձինքներից այն հողե-
րը, որոնք գտնվելով շինվող երկաթուղային
գծի երկայնութեամբ, անհրաժեշտ են եր-
կաթուղու կառուցման համար:

Բայց հարցը դրա մէջն է, թէ գերեզմա-
նոցները, որոնց հետ կապված է ազգաբնա-
կութեան կրօնական գրգռմանը, կապված
են ազգի առաջնութիւնները, մասնաւոր
արդեօք այն հողերի շարքը, որոնք պետու-
թեան օրէնքով ենթարկւում են ստիպողա-
կան յետգնելուն, է կսպարօսի աջի աջին:
Չենք կարծում: Եւ արդարեւ պետութիւննե-
րի որ և է օրէնսդրել մէջ հաղել թէ կը
գտնէր այդ տեսակ յօդուած և Թիֆլիսի,
որը պարծնում է թէ իր քաղաքացիական
օրէնսդրութեան և դատավարութեան մէջ
հետեւում է ճշդ Նապօլեօնի կօդէսին,
հաղել թէ կը գտնի այդ օրէնսդրել մէջ
մի կէտ, որ թոյլ տար պետական էկսպրո-
պրիացիային ենթարկելու այն գետինները,
որոնք զարեւից ի վեր յատկացրած են ե-
ղել գերեզմանատանը:

Բոլոր եւրոպական պետութիւնների օրէնս-
դրութիւնը յարգում է գերեզմանատաների
զոյուլթեան անբռնաբարելի լինելը:
Շատ շատ, առողջական տեսակէտից, կա-
ռավարութիւնը իրաւունք ունի հրամայել
որ քաղաքի կենտրոնում, կամ քաղաքի
շատ մօտ գտնվող մի գերեզմանատանը նոր
նշանները այլ ևս չը թաղվին, այլ
թաղվին գերեզմանատան համար յատկա-
ցրած, իսկ ազգաբնակչութեան կենտրոնից
աւելի հեռու գտնվող մի գետնի վրա, և

Նշան Նիխարէթի լացի ձայնը այդպէս դա-
նեց Գասպարին: Դա մի հետաքրքիր հարց է,
որի պարզ պատասխանն այն է, որ Գասպարը
շատ անգամ էր լացացել իր կնոջը:

Վեց տարի էր անա, որ Նիխարէթը ապրում
էր այս տանը և այդքան ժամանակ դեռ մի խե-
ղճաւ կնոջ նշանակութիւն չէր ստացել իր ա-
մուսնու աչքում: Գասպարը վաղուց է եղել իմա-
ցած թէ ինչ բան է կին արարածը: Այդ խոր
զիտութեանը նա հասել էր մի քանի հին գը-
րերից, որ նա կարդացել էր այն ժամանակ, երբ
դեռ ուրիշ ձեռքի տակ փոքրատու էր: Մասնա-
ւոր չէր մոռնում մի պատմութիւն, որ գտել
էր մի ձեռագիր գրքում: Նա այժմ շատ էր ալի-
ստում որ այդ գրքի արժէքը չիմանալով, ձեռքից
տուել էր. այժմ պարտաւոր էր «մեծ գին» տալ:

Գրքին, բայց տարաբախտաբար չէր ձգուում: Նրա
սիրած պատմութիւնը սակայն անշնչելի էր մը-
նացել, որովհետև մի քանի անգամ գրել էր հաշ-
ւեմտեանից կտրած թղթերի վրա: Մի փիլիսո-
փայ մի սուր էր շնորհ, գրել էր նա, ծանօթնե-
րը դարձան, տեսնելով որ նա գետնի վրա ա-
ռաջ առաւարտին է ջնջում, ապա որմերի գլխին
հիմքն է գնում: Հարցին պատճառը: «Մտադրի
եմ պատկերել, պատմականից փիլիսոփայն, «կի-
նըս կը դայ, վայր է իր կանի տունս»: այն ժա-
մանակ էլ հիմքը գետնի վրա կը լինի, առաստա-
ղին իր տեղը»: Դա մի շատ պարզ ճշմարտու-
թիւն էր և Գասպարը պիտաւոր էր, որ իր տու-
նին այդպէս չը լինի:

Սկսելով իր դաստիարակութիւնը Նիխարէթի
վրա, Գասպարը կարճ միջոցում հասկացրեց նը-
րան որ մարդը կարող է և պիտի խելք ցոյց տայ
կնոջը, և կնոջը պարտաւոր է մարդու խա-
տի ժամանակ ոչ թէ դէպի դուռը փախչել, այլ
դէպի տան պրոնտը, որ մարդը ինչ որ ասի,
այն է կնոջ զիտածը:

Մի անգամ Գասպարը մի այսպիսի փորձ ա-
րաւ: Նիխարէթի տեսնելով որ Նիխարէթը առա-
ւօտեան իր պատկերած վերնակը չէ պատրաստել
և վերջացրել, սաստիկ լարվացաւ և հայհոյելով
հրամայեց, որ տանից դուրս գնայ, կորչի իր հօր
տունը: Նիխարէթը հատապարտեալ ասեց թէ ինքը
չի գնայ, քանի կինդանի է: Գասպարը վեր ա-

պահանջել որ հին գերեզմանատանը ծա-
ռեր ու ծաղիկներ տնկվեն...

Եթէ Թիֆլիսի պարծնում է եւրոպա-
կան պետութեան անունով, նա թող ուշա-
գրութիւն դարձնի նոյնանման դէպքերի
վրա բոլոր եւրոպական երկիրներում: Փարի-
զի մի քանի կենտրոնական գերեզմանատան-
րում արդէն արդեւ չէ նշանցեալներ թա-
ղելու, բայց Ֆրանսիան նոյն իսկ իր մեծ
յօդափոխութիւնների ժամանակ, երբ երկի-
րը կառավարվում էր ամեն բան քան-
դոյ ոչնչացնող վարչութիւնների ձեռքով,
չը համարձակեցաւ քանդել հանգուցեալ-
ները: Հանգուցեալները: Փարիզ, ժյուշի,
Լայպցիգ, Կիւղզըն քաղաքների և եւրոպա-
կան այլ մեծ քաղաքների կենտրոնական
գերեզմանոցները ոչ ոք երբեք չը համար-
ձակեցաւ ոչնչացնել, այլ այդ գերեզմանոց-
ները, որտեղ այլ ևս չէ թոյլ արվում նը-
նիցեալները թաղելու, այժմ փառաւոր և
հրաշալի այգիներ դարձան: Նշանցեալների
ոսկորները հողից չը հանելով, գերեզմանա-
քանքի չորս կողմ տնկեցան ծառեր, թու-
փեր և ծաղիկներ և հին, թողված հան-
գուցեալները, քաղաքների կենտրոնական
այգիներ դարձան:

Այն էլ հարկաւոր է աւելացնել, որ
Թիֆլիսից կառավարութիւնը իրան սեփա-
կանացնելով հայոց գերեզմանատան գետնի-
նը, իրա փոխարէն դուռն արտի տայ
հայոց համայնքին, իր թէ հայոց հա-
մայնքից յետ գնելով գետնից, բայց ով որ
ձանաչում է Թիֆլիսից կառավարութեան
փիանաների դրութիւնը, շատ լաւ գիտէ
թէ Կ. Պոլսի հայոց համայնքը երկար
ժամանակ ստանալու չէ օրէնքով սահման-

աւա սրա շարքը դէս ասաց իրաւաւորը:

Եւ բայց Նիխարէթը չորերը դարձեալ հաւաքեց,
դրաւ տեղը և ասեց. «տունս իմն է, չեմ գնայ»:

—Դու չես գնայ, ես կը գնամ, պատասխանեց
Գասպարը դուրս գնալով:

—Գնա, դու գնա:

Բայց յանկարծ կարծես մի բան մտնւ
Նիխարէթը վաղեց նրա կողմից, բարեւ
թեկից և երկայնի պէս բաց լինելով ասեց.

—Չէ, չեմ թողնի, ոչ դու գնաս, ոչ ես, չեմ
թողի...

Գասպարը իմացաւ, որ իր կնոջ վրա կին չէ:
Եւ մի օրը նրա համար առաւ տան և երկու
հատ պօլիմպերիալ՝ ձակատի վրա շարելու հա-
մար: Նա իր անձնասիրութեան զգացմունքը կա-
տարելապէս բաւականացած էր համարում, տես-
նելով իր կնոջ հարուստ հագուստը: Այնք մի
ծաղիկ է, որքան լաւ նայես, այնքան դեղնեցիկ կը
լինի, մտածում էր նա.—սիրտը ուրիշի վրա չի
գնիլ, միշտ քեզանից դու կը վրայի և քեզ միայն
կը ձանաչէ: Այդ խրատը նա մի քանի իր ընկե-
րակիցներին էլ էր ասել: Բայց Նիխարէթին միշտ
կընկնում էր. «հագուստն ասել է՝ ինձ պահիր սըն-
դուկի մէջ, ես քեզ պահեմ մարդու մէջ»: Եւ Նի-
խարէթը լաւ էր հասկացել մարդուն: Տան մէջ
շատ հասարակ էր հաղնուում, կատարում էր տան
բոլոր ծառայութիւնները, մինչև անգամ չէր թող-
նում որ մարդը ջուր առնի փողով, ինքն էր ա-
մեն առաւօտ ջուրը շաղկալով բերում:

Իր մարդուն շատ լաւ էր նայում Նիխարէթը:
Նիխարէթն ամեն շաբաթ իրիկուն նրա ոտները
լուանում էր, միշտ ցոյց էր տալիս թէ ինչպէս
պէտք է գլուխը ոտները, շուտ շուտ լուանում
էր նրա բազմամեայ չուխայի օժիթը, որի վրա
թանձր կեղտ էր լինում հաւաքված: Բայց մարդ-
րի և չուխայի վերաբերեալ հողաբողութիւնը Նիխ-
արէթին անուր էր հակառակ Գասպարի կամքին:

«Այ կնիկ, մեղ չի տալիլ այդ», կնիկում էր նա
ամեն անգամ. «այստուհեան խո չենք ջանքնաւոր»:

Սակայն և այդքանից յետոյ, կրկնում էր,
Գասպարը դեռ չէր հաւատում, թէ Նիխարէթը
իր ուղած կնիկն է դառնել. այդ պատճառով միշտ
կը դուռնաւոր նրան որ և է խորհուրդ. միշտ
յայտնեց:

ված էկապրոպրիացիայի դերը, այլ ինչպէս ասում է „НОВОЕ ВРЕМЯ“ ռուսաց լրագրի Կ. Պոլսի թղթակիցը, հայերը միայն պատիւ կունենան Բ. Դրան բազմաթիւ պարտաւորութիւն չարքում համարվելու:

Ուրեմն Պետիկթաշի գերեզմանատան հարցը կարելի է երկու տեսակէտից քննութեան ենթարկել. նախ՝ իրաւաբանական, օրինական տեսակէտից, երկրորդ՝ հարցը գործնական կողմից իրաւործելու դժուարութեան տեսակէտից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԱԳԻՐՆ

Թիֆլիս, 11 մարտի

«Մշակ» լրագրի 24 համարում կարդացինք պ. Բէգ-Նազարեանի ստորագրութեամբ զանազան նկատողութիւններ մեր նամակի առիթով, որ տպւել է «Մշակ» № 22 մէջ: Յիշեալ նամակում մենք յայտնել ենք, որ Ներսիսեան դպրոցի ուսուցչական ժողովի վճիռը զօրութեամբ և տեսչի պաշտօնակատարի ինքնազուլու կարգադրութեամբ առաջին, երկրորդ և երրորդ դասարանների դուրսընթացները դարձել են միջանկեալ դասարաններ, ուր տեղափոխել են թոյլ աշակերտներին, դրա նման դասարանները մեր նամակի մէջ անուանել ենք «անկեղծանոցներ»: Այս առիթով պ. Բէգ-Նազարեան երկար ու բարակ խօսում է, թէ ինչպէս նա իր խելով հասկացել է աշակերտների թուլութիւնը, ինչպէս պ. Ափեանց տեսչի պաշտօնակատարութեան ժամանակ աշակերտների թուլութեան աստից բռնկելու հարցում «հանդիպել է դժուարութիւններ» և այդ պատճառով երեխաները մնացել են այն հիւանդ դպրոցի մէջ ամբողջ չորս ամիս. ինչպէս յետոյ պ. Աքիմեան, տեսչի պաշտօնակատարութեան օրից «սկսեց մտածել» այդ մասին և վերջապէս, ինչպէս պ. Եղուածադեր իր առաջարկութիւնով ազատել է բաղմաշատ ծերունուն ծանր մտածմունքից, բայց ազատելով նրան տանջանքից, ինքն

իրան դիմել է «տանջանքի» մէջ, երբ դուրսից արտարանները դարձել են թոյլերի կայարաններ կամ մեղադրաց քաւարաններ: Առաջ բերելով այդ հարցի մանրամասն պատմութիւնը, պ. Բէգ-Նազարեան կարծում է, որ մենք ժամանակ ունենք կամ կը ցանկանանք վիճարկական առարկայ դարձնել Ներսիսեան դպրոցի ուսուցչական ժողովի անկանոն վճիռը և տեսչի անուան կողմից պ. Աքիմեանի կարգադրութեամբ նրա գործադրութիւնը: Ոչ, պատուելի, մենք ժամանակ չունենք խօսել այդպիսի տարօրինակ դէպքի մասին, որ տեղի է ունեցել Ներսիսեան դպրոցում: Պ. Բէգ-Նազարեան չէ հերքում, որ առաջին, երկրորդ և երրորդ դասարաններն են նրանց դուրսընթացները աշակերտներից ջուղել են այնպիսինքն, որոնք, ըստ դարգացման, արժանի են եղել մնալ յիշեալ դասարաններում և չարժանակել իրանց ուսման չընթացը, իսկ մնացածը, «մօտ 100 հոգի» (միջէ դժուար էր պ. Եղուածադերի համար բերել իր յօդուածի մէջ աշակերտների ճիշդ թիւը), «միանգամայն անկարող» լինելով, անարժան են հանդիսացել առաջին, երկրորդ և երրորդ դասարաններին: Նա ևս չէ կարող հերքել, որ այդ վերջին անարժանները հետ անցնել ծրագրում որոշված ուսման չընթացը անկարելի է, երբ այդ չընթացը կանոնաւոր կերպով աւանդւում է համարան տարվայ կէսից: Կարծում ենք, որ թէ երկու դասարաններից մէկի աշակերտները, թոյլ լինելով, ստիպւած են նորից սկսել առարկաների սխալում, այն էլ տարվայ կէսից, իսկ միւս դասարանի մասնակիները անցնում են նոյն չընթացը անընդհատ կերպով տարվայ սկզբից, դժուար չէ հասկանալ, որ այդպիսի դասարանները զուգընթացներ չեն: Եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն նրանք ի՞նչ անուան կարող են կրել, պ. մանկավարժ. միթէ մենք սխալվել ենք, անուանելով նրանց միջանկեալ դասարաններ, միթէ նրանք «անկեղծանոցներ» չեն, քանի որ նրանց մէջ տեղափոխվել են անկեղծանոցներ:

Համարիտ է, որ պ. Բէգ-Նազարեան մեղաւոր չէ աշակերտների այդ տկար դրութեան հանցելու հարցի մէջ և հաւատում ենք, որ տկարը առողջի հետ ապրելով կարող է իր ցաւով վարկել վեր-

ջինին, բայց ըստ բժշկական գիտութեան, այս կարող է վերաբերել ֆիզիկական տկարների, և ոչ մտաւորապէս. այս վերջինների համար, քանի մեզ յայտնի է, աւելի առողջամիտ մանկավարժները հակառակ ընդհանր երեւումներին, որոնք այն է, որ պ. Բէգ-Նազարեան վստահութեամբ հարձակ է երեւումներին մի մասը, 30⁰/օր չափ, կարող կը լինի փոխվել հետեւալ դասարանները, այսինքն առաջ կը փրկվեն իրանց թուլութիւնից և ապա արժան կը կարգադրվեն, որ հեշտութեամբ կը հասնեն իրանց առաջվայ ընկերներին, այն էլ, մի մոռանալով, չորս ամիս վաղ մէջ:

Յայտնի բան է վատ չէր լինի, եթէ դպրոցի ուսուցիչները պ. Աքիմեանի հետ միասին այդ հրաշքը գործէին, բայց բանը նրանումն է, որ մեր դպրոցը հրաշքներ չեն լինում, ուրեմն թոյլութեամբ առաջադէմներին չեն կարող հասնել մի և նոյն ուսման չընթացում, քանի որ տկարները այն չընթացի համար նոյն աշխատանքը պէտք է գործեն երկու անգամ պակաս ժամանակամիջոցում և մի և նոյն ժամանակ տնայված են կաղաւթի իրանց տկարութիւնը: Միթէ դժուար է հասկանալ, որ թոյլ աշակերտները կէս տարվայ ընթացքում աւելի անկարող կը լինեն անցնել այն ուսման չընթացը, որը անցնում են աւելի ընդունակները մի տարում: Պ. Բէգ-Նազարեան ինքն իրան արտաքին ուսումնական երկու աշակերտ, իսկ ուսուցիչներից մէկը իրանց է ստացել արտաքին միայն մէկ աշակերտ, այն ինչ որ մինչև հիմա մնացել է անկատար ուսուցչական ժողովի վճիռը պատրաստական դասարանի աշակերտներից մէկի արտաքին ուսման:

Համարիտ է արդեօք, որ դպրոցի ուսուցիչները, չը գիտեն ինչու, երկու կը կրող տալ աշակերտներին երկամսեայ թվականների սովորական ցուցակը և այդպիսով գրկում են ծնողներին իմանալ իրանց որդիների առաջադիմութիւնը:

Համարիտ է արդեօք, որ դպրոցում աշակերտների վաղը նշանակութեան չունի, որովհետև ուսուցչական ժողովը վաղը թվականների

տահալութեան ունի դուրս գալ հանդէս և խօսել ուսուցիչների, տեսչի պաշտօնակատարի և հոգաբարձուների կողմից, ընդունելով իր վրա նրանց մեղքի քաւութիւնը. երկրորդը նա միշտ գրում էր լուրջ և առանց կրքի, բայց այս անգամ նա դայրացած է երևում, որովհետև գործ է դրել մի քանի անտեղի և անպատշաճ դարձուածներ. եթէ նա կը կամենայ դարձեալ ուսուցիչներին, տեսչի պաշտօնակատարի և հոգաբարձուների կողմից պատասխան տալ, այն ժամանակ մենք կը խնդրենք պատասխանել մեր մի քանի նոր հարցերին, թէ և ի՞նչ հարցի պատասխանը ուսուցչական ժողովի և տեսչի իրաւունքներին վերաբերեալ, չը գիտեն ինչ պատճառով, դանք է առել իր յօդուածի մէջ: Մեր հարցերը ներքոյ յիշեալներն են:

1) Համարիտ է արդեօք, որ Ներսիսեան դպրոցի դասարաններից մէկի համար (կարծեմ երրորդ դասարանի համար) թէ և ծրագրով որոշված է պատմութեան դասաւարտութիւնը, բայց դասացուցակում այս արտաքին համար դասեր չեն նշանակվել: Այս լինի թէ այս կարգադրութիւնը առաջացած է թէ լաւ և թէ թոյլ աշակերտների օգտի տեսակէտից:

2) Համարիտ է արդեօք, որ դպրոցի տեսչի պաշտօնակատարը չարժանակում է ամբողջ իր մէջ երկուստեան հոգաբարձուների իրաւունքը և այդ պատճառով առանց նրանց վճիռ թոյլ է տուել իրան արտաքին ուսումնական երկու աշակերտ, իսկ ուսուցիչներից մէկը իրանց է ստացել արտաքին միայն մէկ աշակերտ, այն ինչ որ մինչև հիմա մնացել է անկատար ուսուցչական ժողովի վճիռը պատրաստական դասարանի աշակերտներից մէկի արտաքին ուսման:

3) Համարիտ է արդեօք, որ դպրոցի ուսուցիչները, չը գիտեն ինչու, երկու կը կրող տալ աշակերտներին երկամսեայ թվականների սովորական ցուցակը և այդպիսով գրկում են ծնողներին իմանալ իրանց որդիների առաջադիմութիւնը:

4) Համարիտ է արդեօք, որ դպրոցում աշակերտների վաղը նշանակութեան չունի, որովհետև ուսուցչական ժողովը վաղը թվականների

Այդպէս էլ արաւ այդ երեկոյեանս իր սովորական օրհնաչափ անելուց յետոյ, նա հանեց զբաղմունքի արկղում, կողպեց: Ապա բաց արաւ Պօղոսի կապոցը: Այդտեղ կային կանացի արծաթի դրարներ, չորս հատ արծաթի զղալ, երեք հատ հին արծաթի մանեթներ: Այդ ամենը երկար ու թեթեւ արաւ և ապա կապեց, տուաւ կնոջը, որը դուրսէս էր գործում և աչքի տակով նայում էր արծաթի երեղեններին:

— Դիւր մտնուումը, ասաց Գասպարը.— բայց այնպէս արաւ, որ միւսներին հետ չը խառնես:

IV

Անցեալ տարվայ մայիս ամսի վերջին տաք օրերից մէկն էր: Այն օր էր, ես դնացի տուն, որ պիտի ծանօթանայի մի մեծ կապոց թղթերի հետ, որ այդ օրն էի ստացել իմ մի ծանօթից:

Հալից յետոյ պատրաստվում էի քիչ հանգստանալ, երբ յայտնեցին թէ մի կին ուղում է ինձ տեսնել: Հրամայեցին ներս հրաւիրել նրան:

Մենեակ մտաւ մի չոր կազմուածքի տէր, յիսնամեայ կնամարդ, գծում հագուստով, բոլորի օրհնութիւն: Մի ձեռքով զլինի դեպք շալից բռնած, որպէս թէ ամաչում էր ինձանից, նա երկու քայլ առաջ եկաւ և ցած ձայնով հարցրեց.

— Պարոն, դու փաստաբան ես. ես այդպէս եմ լսել:

— Այո, դատաստանական գործեր ընդունում եմ. ի՞նչ կը կամենաք:

— Աստուծո՛ւ սէրին, պարոն, ինձ մի ճար արէ՛ք. երկու երեք չոր ու փալաս ունեմ, ուղում են ծախել: Երեխաներս մերկ, անօթի են, այդ դեռ քիչ է, ասում են թէ դեռ ինձ բանտ էլ պիտի նստացնեն:

Ես նկատեցի, թէ ինչպէս այդ վերջին խօսքերի ժամանակ արտասուքի երկու կաթիլներ զլուվեցան, ընկան նրա չորացած թշերի վրայով:

— Ի՞նչ գործ է, հարցրի ես զգալիւ ձայնով:

— Ողորմածագոյ մարդս պարտական է եղել մեր թաղիցի մի անաստածին, հիմա ասում են թէ կամ պիտի տաս, կամ տունը պիտի ծախվի:

— Եւ ի՞նչ, չէ՞ք ուղում որ մարդն իր փողը պահանջի:

Այնք վախեցածի պէս նայեց իմ դէմքին, դարձաւ գրգռւում և որեւէ բան չը խոսեց: Ես քիչ քիչ զգուշացաւ և խօսեց.

— Երեւի հէնց դու ես այն փաստաբանը, որ նրա կողմից ուղում է երեխաներիս կտորիք, ասաց նա շատ ցաւալիւ ձայնով:

Մէջ խօսքեր ինձ շատ ծանր թուացին, յիսնամեայից, հաւատաւորներով որ ես դեռ ոչինչ չեմ խմանում և իրան առաջին անգամս եմ տեսնում: Այնք հաւատաց:

— Ես եկայ աղաչելու, որ ցաւիս մի ճար անես:

— Ի՞նչ գործ է:

— Այս պատմութիւն Մեր հարեան մի վաճառականից էր: Մեր շատ ծանր թուացին, յիսնամեայից, հաւատաւորներով որ ես դեռ ոչինչ չեմ խմանում և իրան առաջին անգամս եմ տեսնում: Այնք հաւատաց:

— Ես եկայ աղաչելու, որ ցաւիս մի ճար անես:

— Ես եկայ աղաչելու, որ ցաւիս մի ճար անես:

— Ես եկայ աղաչելու, որ ցաւիս մի ճար անես:

ու թախեմ. երկու աղջիկ ունիմ. Աստուած միւրեւ, մեզ մի ճար:

Ես սկսեցի հասկանալ թէ փաստաբանի համար ամեն ինչ կարելի չէ, ինչպէս ինքն է կարծում, թէ այլ ես մի դուռը չէ մնացել: Բայց նա չը թողնեց վերջացնել և դարձեալ ասաց, որ կը քնայ որեքին կը բերէ: Ի՞նչ պէտք էր անել:

— Մի քանի օր անց, միջին մի կեղտ ապրում ենք. աղաւթից էլ եթէ դուրս անեն, պիտի քնանք դեռ թախիլենք, ասաց Եղուածադեր իր կոշտ ձեռքերով աչքերը սրբելով:

Ես հանգստացրի նրան, ասելով թէ պէտք է մի կերպ խնդրել պարտատէրին, որ գնէ յետագայ խոստացայ միւս օրը տեսնել նրան, խնդրել Եղուածադեր շնորհակալութիւններ անելով դուրս քնաց:

Հետեւալ օրն ինձ ասացին թէ Գասպարը այլ ևս խանութ չունի: Մի ժամից յետոյ ես նրան դատա հրապարակի մի ծայրում կանգնած:

— Մի քանի օր անց, միջին մի կեղտ ապրում ենք:

Ես խօսեցի ինձ մօտ վաղից և կեղտոտ մահու դէպքերից բռնելով շարժանքով զուլս տուեց ու կանգնեց: Ես պատմեցի բոլորը ինչ որ գիտէի, խնդրեցի մի կերպ անել, խնդրեցին չը նեղել Նա մնաց լռած:

— Մի մեծ փող չէ, թող կորչի, խնդ էն, ողորմելի եմ:

— Զիտ կարող, պ. Աւետիք, ասաց նա երեսը դէպի միւս կողմը դարձնելով:

— Ես խնդում եմ, կրկնեցի ես մի քանի անգամ.— խնդ էն....

— Ես խնդ էն. տարնեմով չան քիչից ջուր խմեմ, փող աշխատեմ, որ այդպէս կորչի. լսելի բան է:

— Ինչ անեք. այնպէս կարծիք թէ կորցրել ես, մնալով ես:

— Ի՞նչպէս.... ինչու եմ մնալով, երբ ձեռքիս հաստատութիւն կայ: Գողութիւն չեմ անում, ինձ հասնելը եմ ուղում:

— Այդ այդպէս է, ես գիտեմ: Բայց ավր խնդները քաղցած, ծարաւ....

— Դա Աստուծո՛ւ սահմանն է:

— Երեւակայեցե՛ք, ինչ կը լինի նրանց դրութիւնը:

— Ես ինչ գիտեմ. նրանց ստեղծող Աստուծո՛ւ ուսմանն է:

— Նրանց Աստուծո՛ւ ու ընդ մէջ չեն:

— Ի՞նչ է, Աստուծո՛ւ ինձ կասի քաղցած մեղքի, աշխատանքը տուր ուրիշին....

— Բայց պէտք է խեղճերին օգնել:

— Այդ մէկն ասաւ Ալեքիս վրա, հինգ բուրլի բաշխեցի. բաւական է. միւսները միանգամից հինգ կոպէկ էլ չեն տալիս խեղճներ թէ չէ, պ. Աւետիք, ուրիշ ինչ անեմ: Հէնց նրանց ապրուստի մասին ես մտածում. բայց ես չը պէտք է ասեմ: Տեսնում ես մի գործ չունեմ, իմ ապրուստս էլ գրանով է: Քեզ պէս ուսում չունեմ, որ հանգիստ....

Եւ բարկացած ընդհատեցի նրան:

— Գնէ ստացած գրաւը յետ տուր:

— Գրաւ.... լիք է գրաւ լինէր, ինչու էի նեղաջուած:

— Բայց հանգուցեալը քեզ արծաթի իրեր է տուել:

— Այսինքն ուղում էր տալ, ես չը վերցրի: Հէնց ասում ես լաւութիւն արաւ. մինչև այժմ արածս քիչ է. առանց գրաւի փող եմ տուել, տոկոսը քիչ եմ հաշուել, այժմ էլ հինգ բուրլին իրանց եմ տալիս: Եթէ փող չունեն, ինչու չեն ասածս լաւում:

— Ասածդ ինչ է:

— Նրանց տունը մեր տանից կապ է. մի բանի պէտք չէ, ասում եմ տունն ինձ տուե՛ք, մի քանի երեսուն բուրլի էլ կը տամ, կապե՛ք. կարծում եմ թէ իրանց թշնամին եմ. էգուց միւս օրը կը քանդվի, կը կոտորի ամենքին:

— Տունը որքի սովորականութիւն է, ծախել չէ կարելի:

— Աճուրդով ծախվի, ինձ վրա կը մնայ:

— Ուրեմն ոչ մի կերպ չեմ ուղում խեղճերին օգնել:

— Ուրիշ ոչինչ. այնպէս լինի որ ոչ ես սահմանից դուրս գամ, ոչ նրանք: Ես էլ խեղճ եմ:

Եւ նա ցոյց տուեց իր կեղտոտ դեղնած չուխան:

Ես զղուանքով հեռացայ:

—Վերջին կայսրի ծննդն օրին բերնում
սպասում էին 85 օրոքստալու անձինք:

—Սուէդի ջրանցքի փորող Լեռնայն գտնվում է
այժմ Բերլինում: Այսին են որ նրան յաջողվել
է յորդորել Գերմանիային, որ նա մասնակցի
1889 թվականի փարիզի աշխարհամանրկին:

—Գերմանիայի տասնհինգ տարվայ կրօնական
պատերազմը այժմ հասնում է իր վախճանին և
Գերմանիան բոլոր կետերում յաղթված է: Պրուս-
սական պետերի ժողովը մասնաժողով է կազմել
քննելու կառավարության առաջարկած նոր եկե-
ղեցական օրենքները. մասնաժողովը իր զեկուցումը
կը ներկայացնի մարտի 11/23-ին: Արժանական կարգե-
րին թույլ է տրվում վերադառնալ, բացի դրանից
թույլ է տրվում նորից սկսել գործելու այն կու-
սանցներին, որոնք պարագում էին օրինորդաց
դատարանություններ: Լեռն XIII իր խաղաղ քա-
ղաքականությունը կարողացաւ հեշտութեամբ
ձեռք բերել այն բոլորը, որին մինչև իր վեր-
ջին շունչը ձգտում էր Պիոս XI. Եւ իշխան Բիս-
մարկի հպարտ բացականչութիւնը որ ըստ չի դը-
նայ կանոնաւ, կորցնում է այժմ իր ամբողջ նշա-
նակութիւնը:

—Ֆրանսիայի և Իտալիայի յարաբերութիւնները
լարվում են Իտալիան անբաւական է որ Ֆրան-
սիան Բիզերտը (Տունիսում) դարձնում առաջ-
նակարգ պատերազմական նաւահանգիստ: Այդ
նաւահանգիստը միջոց կը տայ Ֆրանսիային Մի-
ջերկրական ծովի վրա գերիշխանութիւն տառնալ
և Իտալիան բաւական չէ կարող լինել դրանով:

—Պետերբուրգի լրագրողներին հեռագրում են
Վիեննայից, որ լուր է տարածված թէ Իտալական
թագաժառանգը կամենում է պակսվել աւստրիա-
կան մեծ գրտահանրից մէկի հետ:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Բերլինի ծաղրական մի լրագիր տպել է հետե-
ւեայ պատկերը: Բիսմարկի հագնված է Հռոմի
պապի քահանայապետական զգեստով, իսկ պապը
Բիսմարկի զինուորական շորով: Պատկերի տակ
գրված են պապի հետեւեայ խօսքերը. «Տեսնում
էք, սիրելի իշխան, որ ամեն բան Եւրոպայում
սկսեց աւելի լաւ գնալ այն րօպէից, երբ դուք
կաթոլիկ եկեղեցու գլուխ դարձաք, իսկ ես սկսե-
ցի զեկավարել Գերմանիայի ներքին քաղաքակա-
նութիւնը»:

Փաստային յարաբերութիւնները Ֆինլանդիա-
յում, ինչպէս երևում է, չափ ճիշդ ու կանոնա-
ւոր չեն և նամակները շատ անդամ սաստիկ ու-
շանում են: Նորբերում Աքո քաղաքում ապրող
մի երիտասարդ տառնում է մի նամակ, որ գըր-
ված է եղել 1885 թվ. յունվարի 3-ից և օրին մէջ
այն աղջկի, որին երիտասարդը ամուսնութեան
առաջարկութիւն էր արել, պատասխանում է թէ
համաձայն է նրա կինը դառնալու: Բայց նամակը
Նիւանդ տեղից մինչև Աքո քաղաքը հասնելու
համար երկու տարի գործ դրած լինելով երիտա-
սարդը յուսահատված լինելով, որ իր սիրուհուց
պատասխան չէ ստանում, ամուսնացել էր արդէն
մի ուրիշ աղջկայ հետ: Այդպիսով փաստը պատ-
ճառ է եղել Նիւանդում ապրող խեղճ օրնորդի չա-
մանանաւորում:

Այս օրերս վախճանվեցաւ ժընէվում լեհացի
յայտնի հեղինակ Կրաչեվսկի, 74 տարե-
կան հասակում: Յովսէփ Խլանտիոս Կրաչեվսկի
ծնվեցաւ Վարշայայում, իսկ բարձրագոյն ուսումը
ստացաւ Վիեննայում, իսկ բարձրագոյն ուսումը
արտասահմանում: Նա զարմանալի պոէզիքեր գը-
րող էր. նա պատմաբան, վրայագրող, բանաստեղծ
և կրիտիկոս էր: Նրա մէկտեղ միայն կազմում են
100 հատոր: Բոլոր նրա գրութեաների նիւթը վերց-
րած է լեհական կեանքից: Նրա նշանաւոր մէկտե-
րից կարելի է համարել «Swiat i poeta», «Ula-
wa», «Pod wloskieni niebem» և այլն: Նրա բա-
նաստեղծութիւններից ամենանշանաւորները հե-
տեւաներն են. «Anafielas», «Szatan i kobieta»
և այլն: Նրա պատմական գրութեաներից յայտնի
են Վիեննա քաղաքի պատմութիւնը, նոյնպէս
«Litwa» և «Lithuanian» կրթութեան պատմու-
թիւնը: Վերջին ժամանակները Կրաչեվսկի մե-
ղադրված լինելով պրուսական կառավարութեան

կողմից քաղաքական յանցանքում, դատաւարու-
վեցաւ մի քանի տարվայ բանտարկութեան: Բայց
նորերումս Կրաչեվսկու հիւանդութեան պատճա-
ռով գերմանական կայսրը թույլ տուեց նրան առ-
ժամանակ թողնել բանտը և գնալ հարաւային
Երկիրները բժշկվելու համար: Կրաչեվսկի Մէնտո-
նա քաղաքում էր ապրում, երբ այդտեղ նորե-
րումս սաստիկ երկրաշարժ պատահեց: Տկար ձե-
րոնին ուղղակի անկողնից ստիպվեցաւ ցուրտ
զիշեր ժամանակ, առանց շորերի, փողոց դուրս
վազել և մրսեցաւ: Այդպիսով երկրաշարժը նրա
մահուան պատճառ եղաւ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՕՖԻԱ, 11 մարտի: Գանկովականները յայտնե-
ցին Ռիգա-Բէլին, որ անհնարին են համարում շա-
րունակել բանակցութիւնները: Գանկովի բացակա-
յութեան, Գանկովի կուսակցութեանը պատկա-
նողները շատերի կարմաւարութեան և մամուլի
աղաւաղութեան բացակայութեան պատճառով քա-
նի որ այդ գործիւն մէջ անհնարին է հերքել
կառավարական լրագրողների յարձակումները:

ԲԵՐԼԻՆ, 11 մարտի: Պրուսական սէյմի առաջ-
նորի ժողովը ձեռնամուխ եղաւ եկեղեցական օ-
րինադրի քննութեանը: Վիեննայի թիւերի ժա-
մանակ պետական կանցլէրը յոյս յայտնեց, որ իր
պոժման առաջարկութիւնները միջոց կը տան
հասնել հաստատուն խաղաղութեան պետութեան
և եկեղեցու մէջ: Բայց ինչ էլ չի արդ չի արդիւն
նկատեց իշխան Բիսմարկ, այն ինչ որ ստեղծվել
է, միշտ կարելի կը լինի խափանել օրենսդրու-
թեան ձանապարհով: Պէտք է այդպէս անել որ
կենտրոնը զինադրութեան համար ոչինչ առիթ
չունենայ, քանի որ այդ կուսակցութիւնը միշտ
կապեր է պահպանում կայսրութեան թշնամի
տարրերի հետ: Եթէ կայսրի և պապի մէջ գոյու-
թիւն կունենայ համաձայնութիւն, այն ժամա-
նակ Վիեննայի և կենտրոնի զինադրութիւնը
ոչինչ նշանակութիւն չի ունենայ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 մարտի: «Новости» լրագիրը
հաղորդում է, որ շուտով անպայման կարգվելի
բօշաներին վարել թափառական կեանք: Եթե
գրութիւն կայ թույլ տալ ոտիկանութեանը ոչն-
չացնել այդ թափառականների բանակատեղի
բոլոր պատրաստութիւնները և թափառական
կեանքը վարող անձանց պարտաւորեցնել հաստա-
տարնակ կեանքին: Այդ միջոցները անհրաժեշտ
են համարվում, որպէս զի առաջին առնվի մի
կողմից ձիերի դողմանաւորն և միւս կողմից զե-
ղացիների կամայական վարմունքին բօշաների վե-
րաբերմամբ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 մարտի: Թիֆլիսի նահանգա-
պետ, զենեքաւ-մայոր Գրուսման նշանակված է
Բուխարայի զինուորական նահանգապետի պաշ-
տոնի վրա. Չերնոմորիայի շրջանի զինաւորը,
զենեքաւ-մայոր Նիկիֆորակի նշանակված է Ստաւ-
րոպոլի նահանգապետ, իսկ վարչաւարի նահան-
գական ժանդարմական վարչութեան զինաւորը
զենեքաւ-մայոր Կոմարով նշանակված է Պետրա-
կովիան նահանգապետ:

ԲԵՐԼԻՆ, 13 մարտի: Մեծ իշխաններ վարդի-
միւր Ալեքսանդրովիչ և Միքայէլ Նիկոլաւիչ, Բե-
րլինից կրկին ուղևորվեցան դէպի Պետերբուրգ,
իսկ Մեծ իշխանուհի Մարիա Պաւլովնա ուղևոր-
վեցաւ դէպի Կանն:

ԼՈՆԴՈՆ, 13 մարտի: Երբեք ժողովին հա-
ղորդված է, չինական կառավարութեան տեղեկու-
թիւնների հիման վրա, որ Ռուսաստանը խոստա-
ցաւ ձեռք չը տալ Կորէային, եթէ Անգլիան յոտ
կը կանչի իր նաւերը Համբլտոն նաւահանգստից:

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳԻՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵՒԵ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Զորքը շարժի, մարտի 18-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMENIE) շոգենաւը, նաւա-
պետ ՇԵՈՒՏ (SCHEULT) ղուրս կը դնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն,
Կ. Պոլիս և Մարսէյը: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին. Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արժ-
րունի գալլերէում, № 103.

3—3

ԷԼԻԿՍԻՐ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ

ՍՈՒԼԱԿԻ ԱՐԲԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ (GIRONDE)



Ատամների համար Բենեդիկտեան հայրերից պատ-

րաստած էլիկսիրի ամենօրեայ գործածութիւ-

նը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի

մէջ, պահպանում է ատամները փշանալուց,

սպիտակ է դարձնում և պնդացնում է ատամ-

ները, մաքրում է և պահպանում է ծնօրը:

ԳԻՆԸ դորակը 2 և 8 ֆրանկ. ֆոշին՝ արկղիկը 1 ֆրանկ 25 սանտ. Պատտա՝ արկղիկը 2
ֆրանկ:
Հիմնադրութիւնը դրոշմին ունի 1804 թվից.
Գլխաւոր ագէնտ ՍԵԳՈՒՆ, Բօրդօ (Ֆրանսիա).
ԹԻՖԼԻՍՈՒՄ ծախվում է պ. Բերլինցի մաղաղկում և պարֆիւմների ուրիշ մաղաղկանե-
րում:

4—48 (ե. շ.)

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳԻՆԱՅՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՄԵՍԱՃԸՐԻ ՄԱՐՏԻՏԻՄ

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Հինգշաբթի, 19-ի մարտի, ԲԱԹՈՒՄԻՑ ղուրս կը դնայ շոգենաւ ՔԵԼ-ԻՈ (ՊԵՏ-
ՀՈ) նաւապետ ՔԵԼԼԻՏԻԵՐ (ՊԵԼԼԻՍԻԵ) դէպի Կ. Պոլիս և Զմիւռնիա և յա-
րակցելով Նափա, Պօրտ-Սայիդ և Ալեքսանդրիոս դնացող ընկերութեան շոգենաւերի հետ:
Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒՄ պ. պ. ԲՈՒՐ-
ԿՀԱՐԻՒ և ԸՆԿ. իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԵՐՈՐԳ ՀԵՅՈՐԵԱՆ ՀԵՅՈՐԵԱՆՆԵՐԻ:
3—3

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՏԻՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱՍ

ՀԵՂԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՅ



ՄԵՇ ԵՒ ՓՈՔՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչն-
չացնելու համար: Արկղիկի գինը 1 ր. 50 Կ. Ար-
կղիկի 1/4 արժէ 60 Կ.:

Հեղուկ բազիլի ջնեբի դէմ: Սրուակի գե-
նը, մրձխում միայն 1 րոպէ:

Լու, ցեցի, բողոճ ոչնչացնելու փոշի: Գօ-
լիսաւոր պահեաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է վ. Գրիվն ալի ղեղատան ապրանքների մաղա-
ղկում, «Լոնդոն» հիւրանոցի տակ: Զուրաւովի տանը:

43—100

32—100

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами
въ Тифлисе (Графская ул., противъ Музея).

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՂԱՍՏԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՍՏԱՆ ԱՊՐԱՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ
ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆսկայա փողոց, Մուզէի դիմաց):

Ստացված է Մալց-Է. Կատարական և հայի համար կոնֆիկանդի «Մի հաղորդ»: Ձկան իւղ
մաքրած և ոչ-մաքրած. Պրոլանի ձէթ, քաղցրի է սէնցիլա, բուսական ձէթ, ԲԵՐԺԵՐԻ ԱՄՆԵԱՆ
ԼԱՆ ԱՆԳՈՒՄԱԿԱՆ ՕՍԱՍ, ընդլի փոշիով և դոնտերով: բոք հանելու դեղեր, կոշիկների և վեռ-
նիս կոշիկների համար. սամալաւը և առհասարակ մետաղեայ գործիքները սրբելու իւղ և փշի:
ՇՎԵԴԱԿԱՆ ԳՐԵՖՏԻՐ ԱՌԱՋԻՆ ՖԻՐՄԱՅԻ ԼՈՒՅՎԻ, և տնտեսութեան ուրիշ պարագաները Լէնզլի
թիւննու բաղաւոր. թիւննու կրէմ. Է. մոսկովա և Է. զոլոտուի Կոստանի արկղանքներ, երեւի
և մորթու թարմութիւնը պահպանելու համար: Վիտանիի Լէնզլի մաղերը անդադնելու համար:
Գեղատան ապրանքների վաճառման կողմանան ընկերութեան մէջ, ԹԻՖԼԻՍՈՒՄ, և ԲԱԳՈՒՄ
նրա բաժանմունքում: